*Տպագրված է ընդամենը 4 օրինակ*
*ՕՐԻՆԱԿ _1_*

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՏԵԼԵԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԴԻՐ
ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

«10» դեկտեմբերի 2008 թ.

*ՆԱԽԱԳԱՀ՝*

___________ ԳԵՈՐԳԻ ՉԱԼՏԻԿՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ

« » _______________ 2008թ.

Գրանցման թիվ _______________

Վկայական թիվ _______________

Պետական ռեգիստրի ղեկավար

________________ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

# «ՏԵԼԵԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

*2008 թ.*

## 1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Տելեբժշկության հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետև` Ասոցիացիա), ոչ առևտրային կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա օրենքով սահմանված կարգով միավորվել են ֆիզիկական անձինք` իրենց ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանն առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:
1.2 Ասոցիացիան գործում է ՀՀ օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:
1.3 Ասոցիացիայի գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:
1.4 Ասոցիացիան գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում` այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:
1.5 Ասոցիացիայի անվանումն է`

| | |
|---|---|
| հայերեն` | «Տելեբժշկության հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն |
| ռուսերեն` | Î á ù åñòâå í íàÿ î ðãà í èçàöèÿ “Àð ì ÿ íñêàÿ àññî öèàöèÿ òåëå ì åäèöè í û” |
| անգլերեն` | “Armenian association of telemedicine” non-governmental organization |

1.6 Ասոցիացիայի գտնվելու վայրն է` ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 5, բն. 19:

## 2. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Ասոցիացիայի գործունեության նպատակն է` ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով` նպաստել Հայաստանում բժշկագիտության և գործնական բժշկության զարգացմանը, նրա մատչելիության բարձրացմանը` տելեբժշկության ուսումնասիրության, ներդրման և զարգացման միջոցով:

2.2 Սույն նպատակին համապատասխան Ասոցիացիա սահմանում է հետևյալ խնդիրները.

- Հայաստանում տելեբժշկության միջազգային ստանդարտների և ուղեցույցների ներդրում և կիրառում
- Տելեբժշկության նյութատեխնիկական բազայի և ենթակառույցների համակարգի ստեղծում
- Միջազգային համապատասխան կազմակերպությունների հետ կապերի ձևավորում և համագործակցություն
- Տեղական և միջազգային գիտա-գործնական և ուսումնական միջոցառումների կազմակերպում
- Կարճաժամկետ և երկարաժամկետ գիտական, հետազոտական ու կրթական ծրագրերի իրականացում` համագործակցելով հարակից ոլորտների մասնագիտական կազմակերպությունների և խմբերի հետ:

2.3 Ասոցիացիան կարող է իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

## 3.ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

4.0 Օրենքով սահմանված կարգով ասոցիացիայի անդամ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա ցանկացած քաղաքացի, որը ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Ասոցիացիայի կանոնադրությունը:

5.0 Ասոցիացիայի անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է Ասոցիացիայի խորհրդին (այսուհետև` Խորհուրդ), ներկայացնելով ասոցիացիայի 2 անդամների գրավոր երաշխավորագիր:

Ասոցիացիայի անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Խորհուրդը: Մինչև տասնչորս տարեկան անչափահասը Ասոցիացիային կարող է անդամագրվել իր ցանկությամբ` օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա: Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասը, եթե օրենքով սահմանված կարգով լրիվ գործունակ չի ճանաչված, Ասոցիացիային կարող է անդամագրվել իր դիմումի հիման վրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

6.0 Ասոցիացիային անդամագրված անձն ազատ է դուրս գալու Ասոցիացիայից: Ասոցիացիայի անդամությունից զրկումը տեղի է ունենում Խորհրդի որոշմամբ:

7.0 Ասոցիացիայի այն անդամը, որը Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում վեց ամիս անընդմեջ չի վճարում անդամավճար, Խորհրդի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

## 8.ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.0 Ասոցիացիայի անդամն իրավունք ունի`

ա/ ընտրել և ընտրվել Ասոցիացիայի բարձրագույն և այլ մարմիններում, ընդ որում, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում կարող է ընտրվել 18 տարին լրացած անձը.

բ/ Ասոցիացիայի աշխատանքները բարելավելու նպատակով նրա ղեկավար մարմիններին ներկայացնել դիմումներ, առաջարկություններ և բողոքներ.

գ/ սպառիչ տեղեկատվություն ստանալ Ասոցիացիայի գործունեության մասին.

դ/ ազատ դուրս գալ Ասոցիացիայից.

ե/ Ասոցիացիայից ստանալ իրավական օգնություն` ուղղված իր օրինական շահերի պաշտպանությանը.

զ/ մասնակցել Ասոցիացիայի կողմից կազմակերպված միջոցառումներին.

է/ Ասոցիացիայի ղեկավար մարմինների ոչ կանոնադրական գործունեության դեմ գրավոր բողոքարկել ժողովին, կամ դատարան` օրենքով սահմանված կարգով:

10.0 Ասոցիացիայի խորհուրդը կարող է շնորհել ասոցիացիայի պատվավոր անդամի կոչում` հասարակական, բարեգործական, գիտական կամ ասոցիացիային աջակցող այլ գործունեության համար:

11.0 Ասոցիացիայի անդամը պարտավոր է`

ա/ ցուցաբերել հնարավոր աջակցություն ասոցիացիայի գործունեությանը.

բ/ կատարել Ասոցիացիայի կանոնադրության պահանջները, ղեկավար մարմինների որոշումները.

գ/ մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար` Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, որոնց չափն ու վճարման կարգը սահմանում է Խորհուրդը.

դ/ բարեխղճորեն կատարել իր վրա դրված պարտականությունները.

ե/ բարձր պահել Ասոցիացիայի հեղինակությունը.

12.0 Ասոցիացիայի կանոնադրությունը խախտող կամ իր պարտականությունները չկատարող անդամի նկատմամբ Ասոցիացիայի ժողովի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ` նկատողության, Ասոցիացիայի անդամությունից զրկում:

## 13. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

14.0 Ասոցիացիան հանդիսանում է իրավաբանական անձ` պետական գրանցման պահից:

15.0 Ասոցիացիան ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք` հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով և խորհրդանշով, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում` Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել

գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր և պատասխանող հանդես գալ դատարանում:
16.0 Ասոցիացիան ունի խորհրդանիշ, որում շրջանագծի մեջ պատկերված է արբանյակային ալեհավաքի և բժշկության խորհրդանիշի ոճափոխումը և «ՏԵԼԵԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» և « ARMENIAN ASSOCIATION OF TELEMEDICINE»:
17.0 Ասոցիացիանն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:
18.0 Ասոցիացիանն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

ա/ տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին.

բ/ հիմնադրել լրատվության միջոցներ.

գ/ կազմակերպել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր.

դ/ ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքները և օրինական շահերը այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

ե/ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն՝ իր կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների միջոցով.

զ/ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, վարձակալել և օգտագործել անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք.

է/ օտարել կամ վարձակալության կամ անվճար օգտագործման հանձնել Ասոցիացիային պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

ը/ կնքել օրենսդրությամբ չարգելված պայմանագրեր և այլ գործարքներ.

թ/ ինքնուրույն կազմավորել և տնօրինել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ վարկեր, դրամաշնորհներ, այդ թվում՝ արտարժույթով.

ժ/ իրականացնել ինքնուրույն արտաքին գործունեություն, այդ թվում՝ կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին, ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

## 19. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20.0 Ասոցիացիան պարտավոր է՝

ա/ ցանկացած ֆիզիկական անձի պահանջով, յոթ օրացուցային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու ասոցիացիայի կանոնադրությանը.

բ/ օրենքով սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում.

գ/ իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել ասոցիացիայի ժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնորեն մատչելի լինելը.

դ/ պետական կառավարման լիազորված մարմնի պահանջով նրան տրամադրել իր բարձրագույն և այլ մարմինների որոշումների պատճենները, Ասոցիացիայի գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմինների ներկայացուցիչներին ներկա գտնվել Ասոցիացիայի ժողովին.

ե/ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններին.

զ/ առանձնացված ստորաբաժանում կամ հիմնարկ ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո՝ մեկ ամսյա ժամկետում դիմել պետական գրանցման մարմին, սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար.

է/ վարել իր անդամների հաշվառումը.

ը/ առանց լիազորագրի ասոցիացիան ներկայացնելու իրավունք ունեցող պաշտոնատար անձի և (կամ) ասոցիացիայի գտնվելու վայրի հասցեի փոփոխման դեպքում, 14 օրացուցային օրվա ընթացքում պետական գրանցման մարմին ուղարկել այդ անձի անձնագրային տվյալները և (կամ) Ասոցիացիայի գտնվելու վայրի հասցեի մասին տվյալները:

## 21. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

22.0 Ասոցիացիայի բարձրագույն մարմինը ընդհանուր ժողովն (այսուհետ՝ ժողով) է, ղեկավար մարմինները՝ նախագահը և խորհուրդը:

Ասոցիացիայի գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Ասոցիացիայի բարձրագույն մարմնին՝ ժողովին:

23.0 Ժողովը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ: Ժողովը հրավիրում, դրա անցկացման կարգն ու ժամկետները որոշում է Խորհուրդը: Եթե Ասոցիացիայի անդամների թվաքանակը անցնում է հարյուրի սահմանը, ապա Խորհրդի կողմից սահմանված կարգով ժողովին կարող են մասնակցել անդամների կողմից ընտրված ներկայացուցչական պատվիրակները:

Ասոցիացիայի արտահերթ Ժողով հրավիրվում է Ասոցիացիայի անդամների մեկ երրորդի կամ Ասոցիացիայի վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պատճառաբանված պահանջով՝ Խորհրդի կողմից՝ պահանջող կողմի հաստատած օրակարգով՝ ոչ ուշ, քան 14 օրացույցային օրվա ընթացքում:

7.3 Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

ա/ Ասոցիացիայի կանոնադրության հաստատումը և փոփոխումը.

բ/ Ասոցիացիայի ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը, այդ մարմինների կազմի փոփոխումը կամ լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

գ/ Ասոցիացիայի գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունների հաստատումը:

դ/ Ասոցիացիայի վերակազմակերպման և լուծարման մասին որոշումների ընդունումը.

1.0 Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Ասոցիացիայի անդամների կամ պատվիրակների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են ասոցիացիայի բոլոր անդամների կամ պատվիրակների ձայների պարզ մեծամասնությամբ:

2.0 Խորհուրդն ընտրվում է Ժողովի կողմից երկու տարի ժամանակով: Խորհրդի կազմում կարող են ընտրվել 5-ից ոչ պակաս և 9-ից ոչ ավել անդամներ:

Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են Ասոցիացիայի նախագահի կողմից ոչ ուշ քան վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրվել նաև Ասոցիացիայի անդամների 1/3-ի, Խորհրդի երկու անդամների կամ Ասոցիացիայի վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով:

3.0 Խորհուրդը՝

ա/ հաստատում է Ասոցիացիայի նախագահի հաշվետվությունները, այդ թվում՝ Ժողովին ներկայացվող հաշվետվությունը.

բ/ առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ.

գ/ ընդունում է Ասոցիացիայի անդամ և ազատում կամ զրկում անդամությունից.

դ/ Ասոցիացիայի անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքներ և տույժի միջոցներ.

ե/ ղեկավարում է Ասոցիացիայի գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակահատվածում.

զ/ սահմանում է Ասոցիացիայի անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման կարգը, չափերը և ձևերը.

է/ ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Ասոցիացիայի՝ մեկ միլիոն դրամը գերազանցող արժողությամբ գույքը.

ը/ ստեղծում և լուծարում է Ասոցիացիայի հիմնարկները, առանձնացված ստորաբաժանումները /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.

թ/ հաստատում է Ասոցիացիայի աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը.

ժ/ սահմանում է Ասոցիացիայի ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության կարգը և չափը,

ժա/ հաստատում է Ասոցիացիայի հաշվապահական հաշվառման հաշվետվությունները.

ժբ/ իրավունք ունի քննարկել և լուծել Ասոցիացիայի գործունեությանն ու կառավարմանն առնչվող ցանկացած հարց, բացառությամբ Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահվածներից:

4.0 Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նրան մասնակցում են իր անդամների 2/3-ը և ավելին:
Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:
Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է:
5.0 Ասոցիացիայի նախագահն ընտրվում է ժողովի կողմից 2 տարի ժամանակով:
6.0 Ասոցիացիայի նախագահը.

- ղեկավարում է Խորհրդի աշխատանքները և վարում է նրա նիստերը.
- ներկայացնում է Ասոցիացիան առանց լիազորագրի.
- իրականացնում է Ասոցիացիայի ողջ գործաղիր ղեկավարումը.
- արձակում է հրամաններ, տալիս է լիազորագրեր.
- օրենքով սահմանված կարգով կնքում է գործարքներ, ստորագրում է պայմանագրեր, ֆինանսական փաստաթղթեր, բացում բանկային հաշիվներ.
- հաստատում է Ասոցիացիայի աշխատակազմի հաստիքացուցակը, աշխատողների վարձատրության կարգն ու չափերը.
- ձեռք է բերում, տիրապետում, օգտագործում, տնօրինում, օտարում և դուրս գրում Ասոցիացիայի՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողությամբ գույքը՝ ցանկացած չափի և քանակի:

7.0 Ասոցիացիայի վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) ընտրվում է Ժողովի կողմից 2 տարի ժամանակով: Խորհրդի անդամները և Ասոցիացիայի նախագահը չեն կարող լինել Վերահսկիչ հանձնաժողովի անդամներ:
8.0 Վերստուգիչ հանձնաժողովն (վերստուգողը) իր աշխատանքներն իրականացնում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են տարեկան առնվազն 2 անգամ: Նիստ կարող է հրավիրվել նաև Ասոցիացիայի անդամների 1/3-ի, հանձնաժողովի անդամների մեկ երրորդի, Ասոցիացիայի նախագահի կամ Խորհրդի պահանջով:
9.0 Ասոցիացիայի վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների 2/3-ը: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Եթե վերհսկող մարմինը վերստուգողն է, ապա նա որոշումներ է ընդունում միանձնյա:
10.0 Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) կարող է Ասոցիացիայի նախագահից և այլ աշխատողներից պահանջել Ասոցիացիայի գործունեությանն առնչվող ցանկացած տվյալներ և հաշվետվություն:
11.0 Վերստուգիչ հանձնաժողովը (վերստուգողը) պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Ժողովին՝ Ասոցիացիայի գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին:

## 1. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

2.0. Ասոցիացիայի գույքը հանդիսանում է Ասոցիացիայի սեփականությունը:
3.0. Ասոցիացիան որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ գույք, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Ասոցիացիայի անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:
4.0. Ասոցիացիայի սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

- Ասոցիացիայի անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,
- բանկերից և վարկային կազմակերպություններից ստացված վարկերը,
- դրամաշնորհները,
- բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,
- Ասոցիացիայի կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

5.0. Ասոցիացիայի սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:
6.0. Ասոցիացիայի սեփականությունը կարող է բռնագանձվել միայն դատարանի կողմից` օրենքով սահմանված կարգով:
7.0. Ասոցիացիայի միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանավաճ նպատակների և խնդիրների իրականացման համար:
8.0. Ասոցիացիայի ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրված անձինք ասոցիացիայի կողմից կարող են վարձատրվել: Նշված անձանց վարձատրության չափը սահմանում է Խորհուրդը:

## 9. ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9.1 Ասոցիացիան կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ` օրենքով սահմանված կարգով:
9.2 Ասոցիացիան կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ:
Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:
9.3 Ասոցիացիայի լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Ասոցիացիայի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ, եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

* * * * *

*Սույն կանոնադրությունը կազմված 10.12. 2008թ.*